## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<14>> հոկտեմբերի 2016 թվականի N 34

## ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, Խնկոյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի օրակարգը.

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**Խնկոյան համայնքի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի**

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ավագյան Վարդուհի Արամայիսի | | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | | | |
| Ղազարյան Բագրատ Միշայի | | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | | | |

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ (ստորագրություն) Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ (անուն, ազգանուն)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«14» սեպտեմբերի 2016 թվականի N 35**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Խնկոյան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 30.09.2016թ. եզրակացությունը՝

**Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.**

1. Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակչին վճարել հատկացված գումարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ավագյան Վարդուհի Արամայիսի | [signature] | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | [signature] | | |
| Ղազարյան Բագրատ Միշայի | [signature] | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | [signature] | | |

**Խնկոյան համայնքի ղեկավար** [signature] **Վ. Համբարձումյան**

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Խնկոյան համայնքի ավագանու
2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 35 որոշման

# Ց Ո Ւ Ց Ա Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

1) Օֆիկ Յալաջյան Վոլոդյայի   քսանհինգ հազար դրամ,
(Անուն, ազգանուն, հայրանուն)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՔՍԱՆՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ:

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________ (ստորագրություն)   Սիրրուշ Խաչոյան (անուն, ազգանուն)

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խնկոյան համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ մշտական գործող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց Խնկոյան համայնքի ղեկավարին դիմած նույն համայնքի բնակիչ Օֆիկ Վոլոդյայի Հալաջյանի 25000 դրամի սահմաններում ֆինանսական օգնություն խնդրանքի մասին դիմումը և սոցիալական պայմանները: Արդյունքում պարզվեց, որ՝

Օֆիկ Վոլոդյայի Հալաջյանը բնակվում է սոցիալապես վատ պայմաններում, վատառողջ է, ունի բուժման կարիք: Ամուսինը նույնպես ունի առողջական խնդիր ծերության կենսաթոշակառու է: Բնակվում են չորս անձով, չեն աշխատում:

Խնկոյան համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները նա կատարում է պատշաճ կերպով: Հանձնաժողովը իր համաձայնությունը տվեց Օֆիկ Վոլոդյայի Հալաջյանի դրամական օգնության խնդրանքի բավարարմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Բաբայան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Վազգեն Մանուկյան

հաքնձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Ավագյան

հանձնաժողովի անդամներ՝ Շիրակ Հարությունյան

Նորայր Սարիբեկյան

Սանասար Համբարձումյան

30.09.2016թ.